ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 129-Ա « 15 » հունվարի 2025 թ.

ՋՐԱՇԵՆԻ ՓՈՂՈՑԻ Հ.127 ՀԱՍՑԵՈՒՄ ԳՏՆՎՈՂ ՀՈՂԱՄԱՍԻ
ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ՃՇՏԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք են հանդիսացել լիազորված անձ Նելլի Մակարյանի դիմումը՝ ըստ կտակի ժառանգության իրավունքի 04.07.2024թ. վկայագրով Հարություն Մակարյանին փոխանցված, Ջրաշենի փողոցի հ.127 հասցեի հողամասի սահմանների ճշտման և հատակագիծ հաստատելու մասին, «Հայաստանի Ազգային Արխիվ» ՊՈԱԿ-ի կողմից տրամադրված 04.10.2022թ. հ.Հ-11723 տեղեկանքը, Ժողովրդական դեպուտատների Շորբուլաղի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի 25.09.1990թ. հ.34/2 որոշումը, ՀՀ կադաստրի կոմիտեի 28.10.2024թ. հ.ԱՏ-28102024-01-0567 տեղեկանքը:

Տեղագրական հանույթի ճշգրտումից պարզվել է, որ Ջրաշենի փողոցի հ.127 հասցեում գտնվող տնամերձ հողամասի փաստացի մակերեսը կազմում է 600.0քմ, որքան ամրագրված է Ժողովրդական դեպուտատների Շորբուլաղի գյուղական խորհրդի գործադիր կոմիտեի 25.09.1990թ. հ.34/2 որոշման մեջ:

ՀՀ կառավարության 04.06.2020թ. հ.1023-Ն որոշմամբ հաստատված հավելվածների համաձայն՝ ըստ տարածագնահատման համաձայնեցված սխեմայի քննարկվող հողամասը գտնվում է 11-րդ գոտում:

Ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, հողային օրենսգրքի 52-րդ և 59-րդ հոդվածներով, հաշվի առնելով Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության Դ-134554 եզրակացությունը.

1.Սահմանել, որ Ջրաշենի փողոցի հ.127 հասցեում գտնվող հողամասի սահմանները որոշվում են 600.0քմ մակերեսի համար սահմանված կարգով հաստատված հատակագծով:

2. Սույն որոշումը ենթակա է պետական գրանցման ՀՀ կադաստրի կոմիտեի համապատասխան ստորաբաժանումում:

3. Որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

4. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության, անշարժ գույքի կառավարման վարչությունների պետերի վրա:

5.Որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետի առաջին տեղակալ Ա.Փամբուխչյանը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ